ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Մարտի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության նորանշանակ դեսպան Թորդա Էբոթ-Ուայթին և իր բարեմաղթանքն ու շնորհավորանքը հայտնեց նշանակման առիթով:

Զրույցի ընթացքում խոսվեց երկու երկրների միջև առկա բարեկամական հարաբերությունների, Հայ Առաքելական ու Անգլիկան Եկեղեցիների միջև եղբայրական կապերի մասին: Տիկ. դեսպանի խնդրանքով Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաև Հայ Եկեղեցու խորհրդային տարիներին կրած դժվարություններին, ինչպես նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներկայիս կացությանն ու առաքելությանը:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ նորանշանակ դեսպանն իր գործունեությամբ առավել կարդյունավորի հայ-անգլիական ջերմ կապերը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Մարտի 31-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության պատվիրակությանը՝ գլխավորությամբ երկկողմ համագործակցության գծով գլխավոր տնօրենի պաշտոնակատար դր. Ռեյներ Գորդելերի:

Նորին Սրբությունը ողջունեց պատվիրակության անդամների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ մաղթելով, որ նրանց բոլոր ձեռնարկներն ու մտածումները հաջողությամբ պսակվեն:

Դր. Ռեյներ Գորդելերը պատվիրակության անունից իր խորին շնորհակալությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին ջերմ ընդունելության համար և վստահեցրեց, որ երկու երկրների համագործակցությունն արդյունավետ և շահավետ կլինի երկու երկրների և ժողովուրդների համար:

Հանդիպմանը ներկա էին Հայաստանում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Հանս Վոլֆ Բարթելսը և պաշտոնատար այլ անձինք:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Ապրիլի 4-ին Խրիմյան Հայրիկի գերեզմանի մոտ, հանդիսապետությամբ Փառեն եպս. Ավետիքյանի, կատարվեց հոգեհանգստյան կարգ երջանկահիշատակ Հայրապետի ծննդյան օրվա առիթով:

Արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, «Վասպուրական» հայրենակցական միության անդամներ և հավատացյալներ:

Այնուհետև «Վասպուրական» հայրենակցական միության անդամներին ընդունեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը ողջունեց նրանց այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ անդրադառնալով Խրիմյան Հայրիկի ազգանվեր և եկեղեցաշեն գործունեությանը: «Մենք անկեղծ ուրախություն և մխիթարություն ենք ապրում՝ տեսնելով մեր ժողովրդի զավակաց հավատավոր ու նախանձախնդիր ոգին՝ հանդեպ Հայ Առաքելական Եկեղեցին ու նրա սպասավորները»,- իր խոսքում նշեց Վեհափառ Հայրապետը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԳՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի ներքին գործերի փոխնախարար, գեներալ-մայոր Վիտալի Մազյակովին՝ ՀՀ ոստիկանապետ Հայկ Հարությունյանի ուղեկցությամբ:

Զրույցի ընթացքում խոսվեց հայ-ռուսական ջերմ բարեկամության մասին: Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց, որ դարավոր այդ բարեկամությունը շարունակում է զարգանալ ու ամրապնդվել պետական մակարդակներով՝ ի շահ երկու երկրների ու ժողովուրդների բարօրության:

Որպես ասվածի վկայություն փոխնախարարը փաստեց երկու երկրների իրավապահ մարմինների միջև առկա սերտ համագործակցության մասին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻՏՎԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 23-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լիտվայի Հանրապետության պաշտպանության նախարար Լինաս Լինկևիչուսի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ պաշտպանության փոխնախարար Միքայել Գրիգորյանի ուղեկցությամբ:

Վեհափառ Հայրապետը, ուրախություն հայտնելով հայ-լիտվական զարգացող հարաբերությունների առնչությամբ, վստահություն հայտնեց, որ պետական մակարդակով փոխայցելությունները կամրապնդեն ու առավել արդյունավետ կդարձնեն նաև երկու ժողովուրդների բարեկամությունը:

Հանդիպման ընթացքում խոսվեց զինված ուժերում հոգևոր ծառայության կարևորության մասին և այս ասպարեզում փոխհամագործակցության հնարավորության շուրջ: Վեհափառ Հայրապետն ուրախությամբ փաստեց, որ այսօր Հայոց բանակում հոգևոր ծառայություն են իրականացնում շուրջ 30 հոգևորականներ՝ նպաստելով քրիստոնեական-բարոյական սկզբունքների ամրապնդմանը զինծառայողների շրջանում:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը և ՀՀ զինված ուժերում հոգևոր ծառայության առաջնորդ Տ. Արշեն աբդ. Սանոսյանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՖՐԱՆՍԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Նույն օրը Վեհափառ Հայրապետն ընդունեց նաև «Ֆրանսիա-Հայաստան բողոքականների համերաշխություն» կազմակերպության նախաձեռնությամբ Հայաստան ժամանած Ֆրանսիայի ավետարանական, կաթոլիկ, ինչպես նաև Հայ Առաքելական Եկեղեցիների ներկայացուցիչների էկումենիկ պատվիրակությանը:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց կազմակերպությանը վերջին տասնամյակում Հայաստանում իրականացրած բարեգործական աշխատանքների համար՝ նկատելով, որ կազմակերպությունն իր գործունեությամբ նպաստում է քույր Եկեղեցիների միջև հարաբերությունների զարգացմանը:

Օգտվելով առիթից, որ պատվիրակության այցը Հայաստան համընկնում է այն օրերին, երբ հայ ժողովուրդը նշում է Հիսուս Քրիստոսի Ս. Հարության տոնը, ինչպես նաև Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը, Նորին Սրբությունն իր զտրկական բարեմաղթանքն ուղղեց հյուրերին, ապա՝ իր գնահատանքը հայտնեց Ֆրանսիայի ժողովրդին ու պե-

փությանը, որ օրենքով ճանաչել է Հայոց ցեղասպանությունը, իսկ ժամանակին նաև ապաստան տվել ցեղասպանությունից մազապուրծ հայ գաղթականների:

«Լիահույս ենք, որ աշխարհի այլ պետություններ ևս, հետևելով Ֆրանսիայի օրինակին, կճանաչեն Հայոց ցեղասպանությունը, որպեսզի մարդկությունը զերծ մնա նման ողբերգություններից»,- ասաց Հայոց Հայրապետը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ